

ԿԱՐԱՊԵՏ ԳԱՐԻԿՅԱՆ, Հայ բուսաշխարհ, տպարան Սրբոց Հակոբյանց,
Երուսաղեմ, 1968, 312 էջ:

1912 թ. Իզմիրյան գրական մրցանակ շնորհվեց սերաստացի Կարապետ Գարիկյանի (1861—1925 թթ.) «Հայ բուսաշխարհ» ձեռագիր աշխատությանը: Դոկտ. Ն. Տաղավարյանը, որը Իզմիրյան գրական հանձնաժողովի հանձնարարությամբ 1912 թ. ծանոթացել էր այդ գործին, բարձր գնահատական էր տվել և անհրաժեշտ էր գտել նրա հրատարակությունը, սակայն երկար ժամանակ աշխատությունը մինաց ձեռագիր վիճակում: 1968 թ. Երուսաղեմի հայ պատրիարքարանի և Դ. Կյուլպենկյան հաստատության նյութական օժանդակությամբ Երուսաղեմի Ս. Հակոբյանց տպարանում լույս է բնծայվել այդ մեծածավալ աշխատությունը, որը ղգալի արժեք է ներկայացնում բուսաբանության մասնագետների համար: «Հայ բուսաշխարհ» մեջ դետեղված է այդ աշխատությունը հրատարակության պատրաստած Կյուրեղ Ժ. վարդ. Գարիկյանի (հանգուցյալ բուսաբանի որդու) գրած հետաքրքրական առաջաբանը, որտեղ խոսվում է Կ. Գարիկյանի հայրենանվեր ու բեղմնավոր կյանքի ու գործունեության, նրա բուսաբանական և բառարանագրական պրպտումների մասին: Տպագրված են նաև դոկտ. Ն. Տաղավարյանի և պրոֆ. Լ. Խաչիկյանի կարծիքները այդ գործի վերաբերյալ:

Կարապետ Գարիկյանը ծնվել ու հիմնականում գործել է Սեբաստիայում: Հրաշքով ազատվելով մեծ եղենից, նա իր կյանքի վերջին տասնամյակը անց է կացրել Հալեպում, ապա՝ Երուսաղեմում, աշխատելով հայկական դրպրոցներում որպես հայոց լեզվի, պատմության և աշխարհագրության ուսուցիչ: Կ. Գարիկյանը շնորհակալ դործ է կատարել հայ մշակույթի ուսումնասիրության ուղղությամբ: Նրա գրչին են պատկանում բազմաթիվ հոգվածներ և երեք մեծ աշխատություններ՝ «Բառգիրք սերաստահայ լեզվի» (1905 թ. արժանացել է Իզմիրյան մրցանակի, հրատարակվել է Երուսաղեմում, 1952 թ.), «Եղենապատում» (հրատ. Բոստոնում, 1924 թ.) և «Հայ բուսաշխարհ»:

«Հայ բուսաշխարհ» աշխատությունը (ավելի քան 300 էջ) իրենից ներկայացնում է հիմնականում Սեբաստիայում աճող վայրի և մշակովի բույսերի հայկական անունների հավաքածու: Բույսերի անուններից բացի գրքում ղգալի շափով տեղ են գտել նաև բույսերի հետ կապված ղանաղան տերմիններ, ասույթներ ու

այլ բառեր, որոնք օգտագործվում են Սեբաստիայի ու նրա շրջակայքի գյուղերում բնակվող հայերի կողմից:

Գրքի ներածական մասում հեղինակը մանրամասն նկարագրում է տվյալ աշխատության ստեղծման պատմությունը, գիրքը կազմելու հիմնական սկզբունքները, բույսերի անունների ծագումն ու նշանակությունը և բազմաթիվ օրինակներ բերում հին Հայաստանում գոյություն ունեցող ծառապաշտության և բուսապաշտության վերաբերյալ: Աշխատությունը առատորեն համեմված է բույսերի հետ կապված ու ժողովրդի մեջ լայնորեն տարածված ղանաղան ավանդություններով ու ասույթներով: Շատ լավ նկարագրված են Սվասի բնությունն ու կլիման, այն պայմանները, որոնք նպաստում են բուսական աշխարհի բազմազանությանը:

Զարմանալի է այն հանգամանքը, որ չլինելով մասնագետ-բուսաբան, Կ. Գարիկյանը լավ գիտակցել է, որ անունների պատահական հավաքումն ու թվարկումը, առանց այդ բույսերի ղեղի ու տեսակի ճշման, քիչ արժեք կունենա: Այդ պատճառով էլ նա, շրջելով գյուղերն ու սավանները և գրանցելով գյուղացիների կողմից օգտագործվող անունները, միաժամանակ հավաքել է այդ բույսերի հերբարիումը ու Ֆրանսիայից դուրս գրված բուսաբանական գրքերի միջոցով որոշել է այդ բույսերի լատիներեն ու ֆրանսերեն անունները: Գարիկյանը բույսերի անունների հավաքման աշխատանքը կատարել է ամենայն բարեխղճությամբ. մի շարք տարիների ընթացքում ամառային արձակուրդների ժամանակ նա շրջադայել է Սեբաստիայի բոլոր շրջաններն ու հավաքել բույսերի անունները, ինչպես նաև տեղեկություններ այդ բույսերի օգտագործման, մշակության և այլ արքերի վերաբերյալ: Սեբաստիայում տարածված անուններից բացի Գարիկյանը Հայաստանի այլ վայրերից եկած գաղթականներին արք ու փորձ անելով և իր հավաքած բույսերը տալով աշխատել է պարզել, թե նրանց մոտ այդ բույսերն ինչպես են կոչվում, և աշխատության մեջ բերում է նաև այդ անունները:

Ներածական մասից հետո սկսվում է բուն աշխատությունը (275 էջ), որտեղ այբբենական կարգով բերված է 2000 բառ: Դրանց կեսից ավելին բույսերի անուններ են, իսկ մնացածները՝ ղանաղան այլ տերմիններ ու բույսերի հետ կապված այլ բառեր: Գյուղացիներից հա-

վաքած բառերից բացի Գարիկյանը բերում է նաև մի շարք բույսերի անուններ, որոնք սաքաղել է իր մշակած քսանից ավելի բժշկականներից և հին ձեռագիր գրքերից:

Յուրաքանչյուր անվան կողքին փակագծի մեջ գրվում է այն վայրը (կամ վայրերը), որտեղ օգտագործվում է տվյալ անունը: Եթե բույսի անունը վերցված է գրականությունից, ապա նշվում է դրքի հեղինակը կամ գրվում է «բժշկարաններ»: Որոշ բույսերի հայկական անունների կողքին բերված են նաև նրանց թուրքերեն և քրդերեն անունները: Այնուհետև արված է, թե բույսը որ բնատանիքին է պատկանում. որից հետո բերվում է բույսի անունը լատիներեն և ֆրանսերեն, իհարկե այն դեպքերում, երբ հեղինակին հաջողվել է այդ տվել է բույսի մանրամասն նկարագրությունը (բարձրությունը, թփի և տերևների ձևը, գույնը, ծաղիկների ձևն ու գույնը, նրա կաղմությունը՝ վարսանդը, առեղների քանակը, միամյա կամ բազմամյա լինելը, արմատի ձևը և այլն): Այնուհետև հեղինակը տեղեկություններ է բերում, թե տվյալ բույսը որ շրջանում և ինչ շափով է տարածված, ինչ պայմաններում է աճում՝ սարերի լանջերին, գետափերին, խոնավ թե չոտային ու քարքարոտ պայմաններում, աղակալած, թե լավ հողերում և այլն: Ապա խոսվում է և այն մասին, թե ինչ նպատակների համար է օգտագործվում տվյալ բույսը՝ ուտելու բանջար, անասնակեր, դեղաբույս, ներկատու բույս և այլն: Այդ նկարագրությունն ավարտելուց հետո բերվում են բույսի հետ կապված ժողովրդական դանազան սովորություններ ու ավանդություններ:

Այս բոլոր նյութերը շատ կարևոր են երկու խմաստով. նախ ճիշտ պատկերացում են տալիս. թե նկարագրվածը ինչ բույս է (մանավանդ այն դեպքերում, երբ հեղինակին չի հաջողվել տալ բույսի լատիներեն անունը) և ապա ընդհանրապես մեծ հետաքրքրություն են ներկայացնում ժողովրդի սովորությունների հետ ծանոթանալու, ժողովրդական բժշկության մասին պատկերացում ունենալու համար և այլն:

Դրքի վերջում զետեղված են բույսերի 160 նկարներ (մեծ մասը գունավոր), որոնցից 90-ը օրիգինալ նկարներ են, կատարված նկարիչների կողմից. անմիջապես բույսերից, իսկ 70-ը արտանկարված են այլ գրքերից: Բոլոր նկարներն էլ կատարված են բարձր որակով և շարժ կերպով պատկերում են բույսի բոլոր առանձնահատկությունները և մեծ չափով նույնպես առաջինը ճշտելու բույսի նկարագրությունն ու նրա ինչ լինելը:

Մի քանի խոսք գրքում տեղ գտած որոշ թեթևությունների մասին: Դժբախտաբար հեղինակին չի հաջողվել բոլոր նկարագրված բույսերի ցեղն ու տեսակը ճշտել և բերել նրանց լատիներեն կամ գոնե ֆրանսերեն անունները, որի հետևանքով երբեմն հնարավոր չի լինում պարզել, թե խոսքը ո՞ր բույսին է վերաբերում: Այնուհետև գրքի մեջ տեղ են գտել բավական քանակությամբ բառեր, որոնք երկրորդական նշանակություն ունեն, ոչ բույսի անունն են, ոչ էլ կարևոր տերմին և իզուր տեղը ծանրաբեռնում են աշխատությունը ավելորդ բառերով: Վերջապես, որպես ցավալի թերություն պետք է նշել այն, որ որոշ բույսերի անուններ ուղղակի սխալ են գրված, ավելի ճիշտ՝ հայկական անվան դիմաց գրված է ոչ թե իսկապես այդ բույսի, այլ բոլորովին ուրիշ բույսի լատիներեն անունը: Բերենք մի քանի օրինակներ՝ իշառովույտ բառի դիմաց գրված է *onobrichis*, որը կորնզանի լատիներական անունն է. իսկ իշառովույտը դա *melilotus*-ն է. անմեծուկ *portulaca*, որը, սակայն, հայերեն կոչվում է փրփրեմ, կամ դանդուռ, իսկ անմեծուկը բոլորովին այլ բույս է, աշորա — գրված է ռազրաս, որը նույնպես սխալ է և այլն:

Պետք է նշել, որ նման սխալները բարեբախտաբար շատ չեն և հավանաբար առաջացել են նրանից, որ գյուղացիները, որոնց Գարիկյանը հարցրել է, շփոթել և սխալ անուն են տվել (դա շատ հաճախ է տեղի ունենում մեր գյուղերում էլ), իսկ ինքը՝ հեղինակը, բուսաբան չլինելով, չի ճշտել այդ սխալը և նույնությամբ ղեկավարել է գրքի մեջ:

Չնայած նշված թերություններին, որոնցից իհարկե, դերժ չեր կարող լինել այսպիսի մի մեծ աշխատություն, այն էլ կատարված նման ղեկավարին պայմաններում, Կարապետ Գարիկյանի «Հայ բուսաշխարհ» գիրքը մի շատ արժեքավոր գործ է, որը ղգալի չափով լրացնում է մեր գիտելիքները բույսերի հայկական անունների և բուսաբանական տերմինների մասին և սիրով կրնալովի այդ բնագավառի աշխատողների կողմից: Հատկապես պետք է նշել այն, որ Կարապետ Գարիկյանի աշխատության մեջ բերված են մի շարք բույսերի նոր անուններ, որոնք մինչև այժմ գոյություն ունեցող բուսաբանական գրականության մեջ չկային և նորություն են հանդիսանում ու լրացնում են հայկական բառացանկը:

Գրքի արժանիքներից մեկն էլ այն է, որ մեզ ծանոթացնում է ոչ միայն բույսերի հայկական անուններին, այլև պատկերացում է տալիս Սևրաստիայի բուսականության մասին:

ԿԼԵՄԱՐ. զԻՄ. ՂՈԿԱՌԸ Զ. ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ